

## **Ամփոփվեցին <<Երգը՝ բարեկամության կամուրջ է>> ռուսական երգի փառատոնի հանրապետական փուլի արդյունքները**

Նոյեմբերի 21-ին Երևանում՝ Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի <<Առնո Բարաջանյան>> համերգասրահում, կայացավ <<Երգը՝ բարեկամության կամուրջ է>> ռուսական երգի փառատոնի հանրապետական փուլը:

Ռուսական երգի փառատոնի հանրապետական փուլին Սյունիքի մարզից մասնակցել է տարածաշրջանային փուլում հաղթած 5 աշակերտ: Փառատոնի այս փուլում մարզից հաղթող է ճանաչվել Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի Դիանա Մաշուրյանը, որը << Կալինկա>> երգով հանդես եկավ ժողովրդական երգ անվանակարգում: Սյունեցի մասնակիցը հանրապետական ժյուրիի կողմից հաղթող ճանաչվեց 15 լավագույնների մեջ և արժանացավ խրախուսական մրցանակի:

Դեկտեմբերի 8-ին Արամ Խաչատրյանի անվան Պետական ֆիլիարմոնիայի մեծ համերգասրահում տեղի կունենա փառատոնի գալա համերգը: